

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

**ՔԱՐՈՉ ՄԱՅՈՒՆ ՄԱՍԻՆ. «ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐՈՒՆ
ՎՐԱՅ ԿԸ ԳՈՎԱԲԱՆՈՒԻ»¹ ԽՕՍՔԻՆ**

Նախ իմաստութիւնը գիտնանք, եւ ապա՝ թէ ինչ է իմաստութեան գործը: Քանի որ իմաստութիւնը բազմատեսակ ու համանուն է, այդ պատճառով արժանի է, որ բոլորն ալ գիտնանք, եւ թէ՛ որու համար կ'ըսէ:

Արդ, առաջին՝ իմաստութիւնը բարոյական է, ինչպէս անասուններուն, գազաններուն եւ սողուններուն, ինչպէս կը վկայէ Գիրքը, թէ՛ «օճը բոլոր գազաններուն մէջ իմաստնագոյնն² էր»³:

Երկրորդ՝ մարդուն բնական հնարքները, որ ծնունդէն ի վեր ունի, իմաստութիւն կը կոչուին, ինչպէս յայտնի է մանուկներէն, որովհետեւ բան մը կը խորհին, սակայն ուրիշ բան մը կը գործեն, բայց ամէն ինչ անկատար, քանի որ գործիքները չունին:

Երրորդ՝ կրթութիւնն իմաստութիւն կը կոչուի, ինչպէս երբ որեւէ մէկ արուեստ, խօսք կամ գործ կը սորվինք, որ կը տեսնենք, իսկ աւարտին կը բացայայտուի [մարդուն] խելամտութիւնն ու տաղանդի ընդունակ ըլլալը:

Չորրորդ՝ իմաստութիւնը շնորհական կը կոչուի, ինչպէս Աստուած Սողոմոնին իմաստութիւն տուաւ⁴, ըստ անոր աղաչանքներուն ու Իր խոստումին, նմանապէս եւ՝ «ով որ խնդրէ, պիտի առնէ, ով որ ուզէ...»⁵:

Հինգերորդ՝ իմաստութիւն, որ բնութենէն վեր է, ինչպէս Պօղոսինը, քանի որ անճառելի բաներուն տեսնող ու Աստուծոյ անհաս գիտութեան լսող եղաւ⁶, այն որ լեզուն արժանի չէ խօսելու այդ մասին: Եւ թէեւ ասի-

¹ Առակ. Ա. 20:

² Աշխարհաբար թարգմանութիւններուն մէջ թէ՛ արեւելահայերէն եւ թէ՛ արեւմտահայերէն օգտագործուած է «խորամանկ» ածականը: Այս թարգմանութեան մէջ պահած ենք գրաբարեան ձեւը (ծանօթագրութիւնը՝ թարգմանիչին):

³ Ծննդ. Գ. 1:

⁴ Գ թագ. Դ. 29:

⁵ Հմմտ. Ղուկ. ԺԱ. 9:

⁶ Տէս Բ. Կորնթ. ԺԲ. 2:

կա աստուածային պարգեւ է, սակայն ասիկա ոչ թէ բոլորին կամ շատերուն, այլ մէկուն [կը տրուի]: Իսկ ան բոլոր խնդրողներուն, բազմաթիւ սուրբերուն եւ մէկի դիմաց:

Վեցերորդ՝ իմաստութիւն է ձգել մարմնական հեշտութիւնն ու խաբէական կեանքը՝ ըստ այնմ. «Մի՛ ցանկալ յափշտակութիւն, եթէ նոյնիսկ հարստութիւնը առուի մը պէս հոսի, ձեր սիրտերը թող չցանկան»⁷: Իսկ իմաստասէրը կ'ըսէ. «Ո՛չ թէ շատ բան գիտցողը, եւ ո՛չ ալ ան, որ բերանով շատ բան կ'ընայ ընել, կ'ըսեմ, թէ իմաստուն է, այլ ան, որ յաջողած է անարատ կեանք ձեռք ձգել»⁸: Իսկ Սողոմոնը կ'ըսէ. «Մարդուն ծերութեան հասակը անոր անարատ կեանքն է»⁹:

Եօթներորդ՝ իմաստութիւնը դիւական է, որոնք են՝ կախարդները, Եգիպտոսի գիտուններն ու Բաբելոնի իմաստունները, ինչպէս յայտնի է աստուածային գիրքերուն մէջ, ինչպէս նաեւ Պօղոսը կկարծէ¹⁰. «Երկուստ, մարմնաւոր եւ դիւական»¹¹:

Ութերորդ՝ իմաստութիւն կը կոչուի նաեւ լռութիւնը, ինչպէս Մարգարէն կ'ըսէ, թէ՛ «ով որ իմաստուն է, այդ ժամանակ կը լռէ, որովհետեւ ժամանակը չար է»¹²:

Իններորդ՝ իմաստութիւն է քաղաքներուն, տուններուն եւ գիւղերուն կառավարումը, որպէս թագաւորներ, իշխաններ, տանուտէրեր եւ ուրիշներ, ինչպէս Սողոմոնը կ'ըսէ. «Ով հանճարեղ է, առաջնորդութիւն կը ստանայ»¹³:

Տասներորդ՝ ճշմարիտ եւ կատարեալ իմաստութիւն է հանդերձեալ կեանքի մասին հոգալը, ինչպէս Սողոմոնը կ'ըսէ. «Իմաստութիւնը ճանապարհներուն վրայ կը գովաբանուի»¹⁴: Եւ ասիկա երկակի է. նախ՝ իմաստութիւն, որպէսզի դառնայ մեղքերէն ու ապաշխարէ, ինչպէս Տէրը կը գովէ. «Աշխարհի որդիները աւելի իմաստուն են, քան լոյսի որդիները»¹⁵:

⁷ Սաղմ. 4Ա. 11:

⁸ Տէս ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶՈՒՂԱՅԵՅԻ, Ասուլթներ քարոզների համար, Արիստոտել, էջմիածին, 1998, էջ 168. (Ժանօթագրութիւնը ինքի քահանայ Ղազարեանինն է):

⁹ Իմաստ. Գ. 8–10:

¹⁰ Մատթէոս Զուղայեցի Վարդապետը Պօղոս առաքեալին վերագրած է մէջբերումը, սակայն կատարուած մէջբերումը Յակոբոս առաքեալինն է (Ժ. Թ.):

¹¹ Տէս Յակ. Գ. 15:

¹² Ամովս. Ե. 13:

¹³ Առակ. Ա. 5:

¹⁴ Առակ. Ա. 20:

¹⁵ Ղուկ. ԺԶ. 8:

Երկրորդ՝ ճանապարհի պաշարը հոգալ, որոնցմով բարութեամբ [կարենայ] նաւահանգիստ հասնիլ:

Արդարեւ, այս բոլոր իմաստութիւններէն միայն մէկը գովելի է, որ հանդերձեալ կեանքին մասին կը հոգայ: Բազմաթիւ կերպերով պիտի ցոյց տամ, որ միայն անսիկա է ճշմարիտ եւ գովելի իմաստութիւնը:

Նախ՝ քանի որ բոլոր իմաստութիւններն այստեղի կեանքին համար օգտակար են: Իսկ այս իմաստութիւնը հանդերձեալ կեանքը շահելու մասին կը հոգայ, ըստ այնմ. «Մէկ բան կը պակսի Բեզի. գնա՛, ունեցուածիդ ծախէ՛ ու տուր [աղիաւանքուն] ու անսպառ գանձեր կ'ունենաս»¹⁶:

Երկրորդ՝ քանի որ ցանկացած իմաստութիւն մարդուն առջեւ մարդը փառաւոր կը դարձնէ, ինչպէս Դանիէլը թագաւորներէն¹⁷ փառաւորութեամբ, եւ ուրիշներ, իսկ այս իմաստութիւնն Աստուծոյ առջեւ փառաւոր կը կանգնեցնէ, ինչպէս յայտնի է իմաստուն կոյսերէն, որոնք փեսային հետ առաքաւոր մտան¹⁸:

Երրորդ՝ քանի որ միւս իմաստութիւնները մարդիկը չեն ազատեր ու չեն փրկեր մեղքերէն, ինչպէս յայտնի է Սողոմոնի պարագային, քանի որ ըստ Գիրքին վկայութեան՝ իրեն նման իմաստութիւն ունեցող ո՛չ ոք եղաւ, սակայն եւ այնպէս մեղքերով մեռաւ: Իսկ այս իմաստութիւնը կը փրկէ ու կ'ազատէ մեղքերէն, ինչպէս Պօղոսը, Պօղը¹⁹, Մակարը²⁰, մարտիրոսները, սուրբ հայրերն ու ուրիշներ, որոնք արդարութեամբ գացին Քրիստոսի մօտ:

Չորրորդ՝ քանի որ միւս իմաստութիւնները մարմինը կը պարարտացնեն եւ օգուտը միշտ ինքն իրեն կը մօտեցնեն, որով այն կը կորսուի: Իսկ այս իմաստութիւնը հոգին կը պարարտացնէ եւ միշտ միայն օգուտը

¹⁶ Տէս Մարկ. Ժ. 21:

¹⁷ Տէս Դան. ԺԴ. 1:

¹⁸ Հմմտ. Մատթ. ԻԵ. 1–11:

¹⁹ Պօղ Անապատական, ծանօթ է նաեւ Պօղ Պարզամիտ անունով: Երկրագործ գիւղացի մըն էր. աշխարհիկ կեանքը ձգելով՝ կը միանայ Սուրբ Անտոն Անապատականին եւ ճգնաւոր կեանքով կ'ապրի (տէս Համաքրիստոնէական Սուրբեր, ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, Գանձասար, Երեւան, 1997, էջ 122): Ձեռագիրին մէջ՝ Պօղայ (ծանօթագրութիւնը խաղ քահանայ Ղազարեանինն է):

²⁰ Մակար Անապատական, Մեծն Մակար: Վերին Եգիպտոսի մէջ ծնած է 301-ին: Երիտասարդ տարիքին անապատ գացած է՝ ինքզինք խոկումի ու ճգնութեան ընծայելու: Աստուծմէ գրեթէ ամէն տեսակի հիւանդութիւններ բժշկելու կարողութեամբ օժտուած էր (տէս Համաքրիստոնէական Սուրբեր, ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, Գանձասար, Երեւան 1997, էջ 123–124) (ծանօթագրութիւնը խաղ քահանայ Ղազարեանինն է):

կը փնտռէ, ինչպէս յայտնի է անոնցմէ, որոնք իմաստութիւն առին ու աշխարհի փառքն արհամարհեցին՝ ըսելով. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պէտք էր կատարէինք, կատարեցինք»²¹:

Հինգերորդ՝ որովհետեւ միւս իմաստութիւնները մարդս կը հպարտացնեն, ինչքան ալ աւելնան [իմաստութիւնները]: Իսկ այս իմաստութիւնն ինչքան ալ շատ է, այդքանով մարդը կը խոնարհի, ինչպէս յայտնի է պոռնիկ կնոջմէն, որ չէր դադրեր Քրիստոսի ոտքերը համբուրելէ²²:

Վեցերորդ՝ քանի որ միւս իմաստութիւններուն բազմաթիւ աշխատութիւն պէտք է, որպէսզի մարդ կարենայ հասնիլ անոնց, իսկ այս իմաստութեան շատ քիչ բան պէտք է, այսինքն՝ միայն զղջալն ու մեղքերէ դառնալը, եւ ահաւասիկ կատարեալ է:

Եօթներորդ՝ քանի որ միւս իմաստութիւնները, եթէ մարդ ունի, իրեն համար առաքինութիւն չեն համարուիր, քանի որ առաքինութիւն չէ, եթէ Աւետարանը՝ գոց [անգիր] ու անոր մեկնութիւնն ալ գիտես, ինչպէս նաեւ առաքեալները²³ եւ անոնց մեկնութիւնը, սակայն չեն գիտեր, թէ Քրիստոս Աստուած է, ինչպէս նաեւ չեն գիտեր տնօրինութեան խորհուրդն ու միւս շնորհները, այլ՝ «ով որ Հօսի կամքը կը կատարէ, ա՛ն է առաքինի, կ'ըսէ Տէրը, եւ արժայութիւն պիտի մտնէ»²⁴: Իսկ այս իմաստութիւնը նոյնինքն առաքինութիւն է, որով անճառելի կեանք կը մտնէ:

Ութերորդ՝ քանի որ միւս իմաստութիւններն ասոր կարօտութիւնը կ'ունենան, իսկ ասիկա անոնց կարօտ չէ, ինչպէս Ենովքէն ու Անտոնէն յայտնի է²⁵, որոնք Գիրքը չէին գիտեր, սակայն զօրաւոր կերպով այս իմաստութեան կառչած ըլլալով՝ առ Աստուած վերափոխուեցան:

²¹ Ղուկ. ԺԷ. 10:

²² Ղուկ. Է. 38:

²³ Հաւանաբար առաքելական Թուղթերը նկատի ունի (ծանօթագրութիւնը տալ քահանայ Ղազարեանինն է):

²⁴ Հմմտ. Մատթ. Է. 21, ԺԲ. 50:

²⁵ Անտոն Ճգնաւոր (251–355), վանականութեան հիմնադիրը: Անոր մասին Սուրբ Աթանաս Հայրապետը տեղեկութիւններ ձգած է: Մատթէոս Զուղայեցի Վարդապետն այս քարոզին մէջ կ'ըսէ. «Ենովքէն ու Անտոնէն յայտնի է, որոնք Գիրքը չէին գիտեր, սակայն զօրաւոր կերպով այս իմաստութեան կառչած ըլլալով՝ առ Աստուած վերափոխուեցան»: Ծննդոց Ե. 24 համարէն յայտնի է, որ Ենովքը երկինք վերափոխուեցաւ, սակայն Անտոն Ճգնաւորին վարքին մէջ կ'ըսուի, որ ան խաղաղ մահով վախճանած է 355-ին: Իր յատուկ փափաքով իր գերեզմանը իր երկու աշակերտներուն կողմէ, որոնք թաղած են զինք, գաղտնի պահուած է (տես Համաքրիստոնէական Սուրբեր, ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, Գանձասար, Երեւան 1997, էջ 118): Թերեւս աշակերտներուն կողմէ գերեզմանին գաղտնի պահուիլն է, որ

Իններորդ՝ որովհետեւ միւս իմաստութիւնը մարդու միտքէն Աստուծոյ երկիւղը կը վերցնէ՝ կարծել տալով, թէ այդ իմաստութեամբ Աստուծոյ ընկեր եղած է, այդ պատճառով այդպիսին շարիք ընել կը սկսի, որ յետամնացներն ու յիմարները չեն կրնար գործել: Իսկ այս իմաստութիւնը Տիրոջ երկիւղով լեցուն է, ինչպէս Սողոմոնը կ'ըսէ. «Տիրոջ երկիւղով իւրաքանչիւր ոք շարունակէն կը խորշի»²⁶, այդ պատճառով ալ գովելի է:

Տասներորդ՝ քանի որ միւս իմաստութիւններով ո՛չ ոք մահուան դռնէն կրնայ անցնիլ եւ կամ մահէն փրկուիլ, որովհետեւ եթէ մարգարէի նման իմաստուն է, մեռած ատեն ամէն ինչը կը կորսուի: Իսկ այս իմաստութիւնը մահուան ժամանակ ալ աւելի կը զօրանայ ու կը ներգործէ, ինչպէս Արիստոտէլը կ'ըսէ. «Այլեւ մահէն կը փրկէ»²⁷: Ըստ այնմ. «Արդարութիւնը մահէն կը փրկէ»²⁸: Ո՞ր մահէն, այսինքն՝ յաւիտեական մահէն, հետեւաբար յայտնի է, թէ ասիկա գովելի է:

Արդարեւ, գիտելի է, թէ մարմնական ճանապարհով կ'ուսուցանէ այստեղի կեանքէն ելքը, այդ պատճառով պէտք է իմանալ, թէ ինչ [պէտք է] խորհին [անոնք] որոնք մարմնաւոր ճանապարհներով կ'ընթանան, որ մենք եւս սորվելով՝ դէպի հոգեւորը փոխուինք:

Արդ, անոնք, որոնք կը փափաքին երկրէ մը ուրիշ երկիր երթալ, բազմաթիւ բաներու մասին կը խորհին եւ նոր միայն ճամբայ կ'ելլեն:

Նախ՝ կը խորհին, թէ այս ճանապարհը, որով մենք կ'երթանք, հեռո՞ւն է, թէ՞ մօտիկ: Ու գիտակ մարդու մը կը հարցնեն, այդպէս ալ մենք, երբ մահուան կը մօտենանք, պարտաւոր ենք գիտնալ, թէ այս ճանապարհը հեռո՞ւն է, թէ՞ մօտիկ: Գիտնալով, թէ այս ճանապարհը հեռու է, ո՛չ թէ ոտքով կը չափուի, այլ ինչքան մարմինը հոգիէն հեռու է, այդպէս ալ անոր ընթացքը, որու հեռաւորութիւնը Տէրն Իրեն համար կ'ըսէ. «Մարդ մը կար, որ ուրիշ երկիր մը գնաց»²⁹: Եւ թէ՛ «ազնուական մարդ մը հեռու երկիր մը գնաց»³⁰, որ այս երթալը Տիրոջ մահն է, եւ թէ Ան Աստուած էր,

Մատթէոս Վարդապետին հիմք տուած է ըսելու, թէ Անտոնն առ Աստուած վերափոխուեցաւ (ծանօթագրութիւնը հաղ քահանայ Ղազարեանինն է):

²⁶ Առակ. ԺԵ. 27:

²⁷ Արիստոտէլ (ն. Ք. 384–322), յոյն փիլիսոփայ ու գիտնական, Պղատոնի աշակերտը եղած է եւ Աղեքսանդր Մակեդոնացիի դաստիարակը: Բերուած մէջբերումին աղբիւրը մեզի անյայտ է (ծանօթագրութիւնը հաղ քահանայ Ղազարեանինն է):

²⁸ Առակ. Ժ 2, ԺԱ. 4:

²⁹ Մատթ. ԻԵ. 14: Մարկ. ԺԳ. 34:

³⁰ Ղուկ. ԺԹ. 12:

այդ պատճառով շուտով՝ երեք օր ետք, վերադարձաւ, իսկ մենք մինչեւ աշխարհի վախճանը կը մնանք ու ապա կը վերադառնանք:

Երկրորդ՝ ճանապարհորդները կը խորհին, թէ այն տեղերը, ուր կ'երթանք, այնտեղ մեզի սիրելիներ կան, թէ՞ թշնամիներ են, այդպէս ալ մենք պէտք է մահուան մասին խորհինք: Ու գիտնալով, որ այնտեղ ոչ ոք մեզի սիրելի է՝ բացի Քրիստոսէն, այն ատեն, երբ Անոր կամքը կատարած կ'ըլլանք, ըստ այնմ. «Եթէ կը սիրէ՞ զիս, պատուիրաններս կը պահէ՞»³¹, իսկ եթէ պահած չըլլանք, Ան մեզի համար մեծ թշնամի է՝ ըսելով. «Հեռացէ՛ք Ինձմէ»³² եւ այլն:

Երրորդ՝ ճանապարհորդները կը խորհին, որ ճանապարհը դիւրին է, թէ՞ դժուար, խառնակութիւն է, թէ՞ խաղաղութիւն, այդպէս ալ մենք պէտք է գիտնանք մահուան մասին: Ու պիտի գիտնանք, թէ շատ դժուար է. նախ՝ որովհետեւ այդ ճանապարհին մասին չենք լսած, թէ ինչպիսին է: Երկրորդ՝ քանի որ մենք զայն չենք տեսած: Երրորդ՝ որովհետեւ թշնամիները ճանապարհին [երկու կողմերը] կը նստին, այսինքն՝ սատանան, ինչպէս յայտնի է աւետարանիչէն, որովհետեւ կ'ըսէր. «Ննջելու ժամանակ, երբ քու մօտդ պիտի գամ, սատանան պիտի զարհուրի»³³: Տակաւին, սատանան մահուան ժամանակ մարդոց հոգիներուն հետ կը պատերազմի: Այնպէս ջանք [կը պահանջուի] մեզմէ այս կեանքէն ելլելը, կարծես անոր (սատանային) բաժինն ըլլանք, այդ պատճառով շատեր, միտքով կուրնալով սատանային խաբէութիւններէն, մահուան օրուան մասին կը մոռնան ու յանկարծակի կը մեռնին՝ առանց զղշումի ու ապաշխարութեան, ու սատանային բաժին կ'ըլլան:

Չորրորդ՝ ճանապարհորդները կը խորհին, թէ ուրիշ մը այդ ճանապարհով գացած է ու շահած է, այլապէս չեն երթար, այդպէս ալ մենք պէտք է մահուան ատեն խորհինք: Ու գիտնալով, թէ անոնք, որոնք մեղքերով այս ճանապարհով գացին, չշահեցան, ինչպէս ջրհեղեղի ժամանակ յայտնի է սողոմացիներէն, ինչպէս նաեւ բոլոր անիրաւներէն: Այդ պատճառով Տէրը կ'ըսէ. «Հեռացէ՛ք Ինձմէ դուք բոլորդ, որ անօրէնութիւն կը գործէք»³⁴:

³¹ Տէս Յովհ. ԺԵ. 10:

³² Մատթ. ԻԵ. 41:

³³ Ամենայն յաւանականութեամբ խօսքը Յովհաննէս աւետարանիչ առաքեալի ննջման պատմութենէն է (տես «Գանձասար», Զ., Երեւան, 1996, էջ 478–549) (ծանօթագրութիւնը Խաղքաշանայ Դազարեանինն է):

³⁴ Մատթ. է. 23:

Հինգերորդ՝ կը խորհին, թէ իրենց հետ եղած ապրանքները բաւարար են այդ ճանապարհորդութեան, եւ թէ իրենց բեռը ինչքան լեցուած է ու եթէ պակաս է, դարձեալ կը բեռնեն, այդպէս ալ պէտք է մենք խորհինք: Ու գիտնալով, թէ մեր բարեգործութիւնները քիչ են, ողորմութիւն ընենք, աղօթքներով հայցենք, մեր մեղքերուն համար լանք, որպէսզի յաւիտեանական անօթութիւնը չկրենք:

Վեցերորդ՝ որովհետեւ ճանապարհորդները կը խորհին, թէ ո՛վ է մեր ընկերը այս ճանապարհորդութեան ընթացքին՝ թշնամիները, թէ՛ սիրելիները, այդպէս ալ պէտք է մենք գիտնանք ու գիտնալով, թէ մեր բարեկամներն այս մահուան ընթացքին մեզի ընկերներ չեն, այլ անողորմ հրեշտակները, այդ պատճառով պէտք է նախ զանոնք սիրելի դարձնել մեզի, այսինքն՝ բարի գործերով, ու ապա անոնց հետ ճանապարհորդութեան երթալ:

Եօթներորդ՝ քանի որ իրենց հետ զէնք ու հեծեալներ կ'առնեն, որպէսզի թշնամիներուն յաղթելով՝ սատկեցնեն զանոնք, այդպէս ալ պէտք է մենք ընենք ու գիտնանք, թէ մեր թշնամիները շատ զօրաւոր են: Այդ պատճառով Պօղոս առաքեալին խրատին համեմատ գործենք. «Հաւատքի վահանը, սիրոյ վահանն ու նետը՝ Աստուծոյ խօսքը, տէգը՝ աղօթքները, սուտերը՝ Քրիստոսի խաչին նշանը, եւ միւս առաքինութիւններով մեր անձերը շրջապատեմք՝ որպէս ընկեր, որպէսզի կարենանք սատանայէն փրկուիլ»³⁵:

Ութերորդ՝ որովհետեւ տան եւ իւրաքանչեւներուն բոլոր պէտքերը կը պատրաստեն եւ նոր միայն ճանապարհ կ'ելլեն, նմանապէս մենք պէտք է ընենք. նախ՝ քանի տակաւին ողջ ենք, ամէն ինչ բաժնել ըստ հոգիի ու մարմինի եւ հարազատներուն տալ, իսկ մեր հոգիներուն բաժինը մեր ձեռքերով աղքատներուն բաշխենք, որպէսզի մահէն ետք հարազատները մեր հոգիները չզրկեն, տակաւին մեր մահէն ետք այլասեռները մեր հոգիներուն բաժին չեն տար, այլ ամբողջը կը յափշտակեն: Այդ պատճառով ինչքան կրնանք, պէտք է ընենք:

Իններորդ՝ կը խորհին, թէ այս գանձը, որ այս երկրէն կը տանինք, պատշաճ է այն երկրին համար, թէ՛ ոչ: Այդպէս ալ պէտք է մենք խորհինք ու գիտնանք, թէ այս աշխարհի «կումաշ»ը, այսինքն՝ ուտելիքը, խմելիքը եւ այլն, այն երկրին վայել չէ, ըստ այնմ. «Աստուծոյ արեւոյտ-

³⁵ Հմմտ. եփես. 2, 16:

թիւնը ուտելիք եւ խմելիք չէ»³⁶, այլ ողորմութիւն պատրաստենք, որպէսզի այնտեղ ողորմութիւն շահինք:

Տասներորդ՝ ճանապարհորդները կը խորհին, թէ այս ճանապարհորդութենէն դառնանք, թէ՞ ոչ: Այդպէս ալ մենք պէտք է խորհինք ու գիտնանք, քանի որ այս ուղեւորութիւնն անդառնալի է, տակաւին վայրն ալ անհնարին է, իսկ դատաստանը՝ սահման չունեցող, բնակիչները՝ անծանօթ: Տակաւին, այնտեղ բնակութեան համար տուն չունինք, ո՛չ որ կու տայ մեզի ու կաշառք ալ չեն առներ: Նաեւ ինչքեր ալ չունինք, թէեւ առնող ալ ըլլայ, ի՞նչ տանք, տեղերը չեն ծախուիր ու գին չունին, ինչպէ՞ս գնենք, նաեւ ներում ալ չկայ ժամանակուան մը համար, ոչ ալ ապաշխարութեան տեղ, այլ դառն տանջանք, անողորմ պատուհաս, ինչպէս նաեւ զրկում՝ Աստուծոյ տեսութենէն: Մահուան ճանապարհին ասոնց մասին խորհելով, ապա այս իմաստութիւնը կը գովուի: Այդ պատճառով կ'ըսէ. «Իմաստութիւնը ճանապարհներուն վրայ կը գովաբանուի»³⁷: Իսկ «ճանապարհ» այս կեանքը կը կոչուի, գրուած է անցեալին:

Իսկ ինչո՞ւ ճանապարհին, երբ մեռելը կը վերցնեն ու թաղումի կը տանին, կանոն է, որ ճանապարհի ընթացքին երեք անգամ հանգիստի համար գետնին կը դնեն: Ասիկա հինգ պատճառով:

Նախ՝ որովհետեւ կ'ըսեն, թէ Գաբրիէլին փողը երեք անգամ կը գոչէ. առաջին՝ Գրիգորի Վիրապին վրայ, միւսը՝ Պօղոսի ու Պետրոսի գերեզմանին վրայ՝ Հռոմի մէջ, իսկ միւսը՝ Քրիստոսի գերեզմանին վրայ: Այդ պատճառով երեք անգամ հանգիստի կը դնենք, որպէսզի ննջեցեալը Գաբրիէլի երեք ձայնելներուն արժանի ըլլայ:

Երկրորդ՝ քանի որ մեռելներու յարութեան ատեն երեք հրաշքներ տեղի կ'ունենան: Նախ՝ իւրաքանչիւրին փոշիները մէկ տեղ կը հաւաքուին, ու մարմինը կը կազմուի: Երկրորդ՝ որովհետեւ հոգին արծուի նման կու գայ ու մարմինին մէջ կը մտնէ: Երրորդ՝ քանի որ Քրիստոսի առջեւէն կ'ընթանան: Այդ պատճառով երեք անգամ հանգիստի կը դնենք, որպէսզի այս երեք գործերուն արժանի ըլլան:

Երրորդ՝ որովհետեւ արդարներուն ու մեղաւորներուն դասերը երեքն են: Մէկը, որ կատարեալ արդարներն են, ինչպէս առաքեալները:

³⁶ Հռոմ. ԺԴ. 17:

³⁷ Առակ. Ա. 20:

Միւսը՝ բոլորովին մեղաւորները, ինչպէս սողոմացիներն³⁸ ու Կայէնը³⁹: Իսկ միւսը՝ միջակ՝ կէս արդարները եւ կէս մեղաւորները: Այդ պատճառով երեք անգամ հանգիստի կը դնենք, որովհետեւ աս ալ այդ դասերէն է, ու կ'աղաչենք, որպէսզի սուրբերուն արժանի ընէ, թէեւ մեղքեր գործած ըլլայ: Այդ պատճառով ալ իւրաքանչիւր հանգիստի ժամանակ Աւետարան կը կարդանք:

Զորրորդ՝ քանի որ ըստ Տիրոջ՝ օթեւանները երեքն են. «Հաւիւր, վաթսուն եւ երեսուն»⁴⁰: Այդ պատճառով երեք անգամ հանգիստի կը դնենք, որպէսզի այս օթեւաններէն դուրս չիյնայ ասիկա:

Հինգերորդ՝ որովհետեւ Աստուած արդարներուն երեք ձեւի պսակներ կու տայ. մէկը՝ կուսութեան, երկրորդը՝ ողջախոհութեան, իսկ երրորդը՝ ապաշխարութեան: Այդ պատճառով երեք անգամ հանգիստի կը դնենք, որպէսզի այս պսակներուն արժանացնէ:

Իսկ «գերեզման» անունը կը ստուգաբանուի, այսինքն՝ բոլորը կը գերէ, եւ ասիկա մէկն է այդ բոլորէն, այդ պատճառով ալ ասիկա ալ անոր կողմէ գերուեցաւ: Եւ ասիկա դժոխքին նման է: Նախ՝ նեղ ըլլալով: Երկրորդ՝ քանի որ բոլոր կողմերէն վիշտ է: Երրորդ՝ որովհետեւ առաջին պատիժը այստեղ կը կրէ՝ գեղեցկայարմար շինուածքը հող դառնալով: Այդ պատճառով նահապետներն ասոր կ'ըսէին. «Երբեք սուգով գերեզման չիջնեմ»⁴¹, բազմաթիւ տեղերէ յայտնի է:

Իսկ «նեւրֆին դոխֆ», որ մարգարէն կ'ըսէ, տանջարանի վայրին համար կ'ըսէ, ուր Բելիարը կը նստի⁴²: Ասոնք իրարմէ կը զանազանուին, որովհետեւ ասորմէ կ'ելլենք, բայց անորմէ՝ ո՛չ: Երկրորդ՝ քանի որ այնտեղ բազմաթիւ ու տեսակ-տեսակ տանջանքներ կան, իսկ այստեղ՝ մէկ հատ միայն: Երրորդ՝ որովհետեւ այստեղ միայն մարմինը կը գրուի, իսկ այնտեղ հոգին ու մարմինը կը տանջուին: Զորրորդ՝ քանի որ ասիկա մեզի մայր է, այսինքն՝ հողը, որովհետեւ ասորմէ ծնանք եւ պէտք է ասոր մէջ դրուինք՝ ըստ աստուածային հրամանին. «Հող էիր ու հող պիտի դառնաս»⁴³: Իսկ այնտեղ մեր կամքով կ'երթանք, այսինքն՝ քանի որ մեղքեր գործեցինք, եւ ո՛չ թէ Աստուած կամեցաւ մեր այնտեղ երթալը: Հինգե-

³⁸ Տէս Ծննդ. ԺԹ.:

³⁹ Տէս Ծննդ. Դ.:

⁴⁰ Տէս Մարկ. Դ. 8, 20:

⁴¹ Հմմտ. Ծննդ. ԽԴ. 29, 31:

⁴² Տէս Ղուկ. ԺԶ. 28: Բ. Կորնթ. Զ. 15:

⁴³ Ծննդ. Դ. 19:

որորդ՝ որովհետեւ այստեղ մէկ գործի իսկ հատուցում չկայ, իսկ այնտեղ՝ բոլորին փոխարէն:

Իսկ թէ գերեզմանը ուղիղ է ու դէպի արեւելք, նախ՝ քանի որ մեր Փրկիչն անկէ պիտի գայ, այդ պատճառով դիակը ոտքերու ուղղութեամբ դէպի արեւելք կը դնենք, այսինքն՝ կ'ուզենք Անոր առջեւէն ընթանալ: Երկրորդ՝ որովհետեւ արեւելքը լոյսի վայրն է, այդ պատճառով կ'ուզենք այնտեղի լոյսին երթալ ու այնտեղ ապրիլ:

Իսկ թէ մեռելը կը պատանքենք, նախ՝ կը ցուցնէ, թէ իմ բոլոր բաներէս դատարկ (մերկացած) եմ եւ հետս տանելիք ոչինչ ունիմ՝ բացի այս կտաւներէն: Երկրորդ՝ մեռելը խրատ կու տայ. «Թէւ դուք այսպէս դատարկ կու գաք մօտս, պատրաստ եղէք, սակայն, թերեւս այս եւս ձեզի չհասնի, քանի որ շատերը առանց պատանքի մեռան»: Երրորդ՝ քանի որ բոլոր զգայարանները պատանքուած են, կը նշանակէ, թէ այլեւս չի կրնար ո՛չ մեղանշել եւ ո՛չ ալ բարիք գործել, այլ ինչ որ մինչեւ հիմա գործած է՝ թէ՛ չար եւ թէ՛ բարի, այն հաւաքուած է, կարծէք, ամանի մը մէջ:

Եւ թէ ինչո՞ւ վայել է կտաւ դնել ու ոչ թէ ուրիշ բան մը, որովհետեւ կտաւը մաքուր է ու բամպակէ է, որ մեռելին ողջութեան ժամանակ ունեցած անարատ վարքը կը խորհրդանշէ: Իսկ սպիտակ՝ մեղքերով չնեկուած, ինչպէս ծնած էր, նոյնպէս անմեղութեամբ մեռած, այդ պատճառով ուրիշ նիւթով չեն կարեր պատանքը, այլ նոյն պատանքէն ձող մը հանելով՝ ատով կը կարեն, որ կը նշանակէ, թէ իր մաքրութեան մեղք չէ խառնուած, այլ սրբութեամբ փայլած է աշխարհի մէջ: Դարձեալ՝ որովհետեւ կտաւը երկրէն է, այդ պատճառով անորմէ պատանք կը դնեն, քանի որ հողին հողէ պատանք վայել է:

Եւ թէ քիթին մէջ խունկ կը դնեն ու անոր վրայ բամպակ, անուշահոտ վարքը կը խորհրդանշէ, որ մեռած պահուն գործերուն հոտը առաւ: Արդարեւ՝ եթէ չարութիւններով կը մեռնի, նոյնիսկ եթէ քիթին մէջ շատ խունկ դնես, չանուշահոտնար:

Իսկ խունկին վրայ դրուած բամպակը պայծառ հաւատքը կը նշանակէ:

Իսկ մեռելին երեսը վերի կողմ դնելը կը նշանակէ իր դիտաւորութիւնը՝ զԱստուած ունենալու: Դարձեալ՝ կը ցուցնէ իր ցանկութիւնը՝ Վերին Երուսաղէմին:

Իսկ թէ՛ «հանգիստ», «դիմի», «դամբարան» եւ «շիրիմ» կը կոչուի գերեզմանը, ասոնցմէ իւրաքանչիւրը բան մը կը ցուցնէ:

Նախ՝ «հանգիստ» կը կոչուի, այսինքն՝ քանի որ մարմինի տառապանքներէն, աշխատութիւններէն եւ չար գործերէն հանգստացաւ: Տակաւին, «հանգիստ» է, որովհետեւ մինչեւ հիմա ինչ արդարութիւն որ հաւաքած է, հիմա կ'ուզէ վայելել:

Իսկ «ղիւրբ» կը կոչուի, քանի որ անոր մէջ կը դրուի մարմինը, որպէս թէ սնտուկի մը մէջ: Տակաւին, «ղիւրբ»ը նշաններով տեղը կը ցուցնէ:

Իսկ «դամբարան», որ է պահարան, որպէսզի այնտեղէն առնուի դարձեալ, ինչպէս դրուեցաւ եւ քանի որ կը պահէ, ո՛չ գազանէ կ'ուտուի, ո՛չ ջուրէ կը ցրուի ու ո՛չ ալ քամիէն կը հոսի, ինչպէս նաեւ այսպիսի բաներու հոսելէն կը պահէ, տակաւին՝ մարմինի գանձարանն է, այդ պատճառով կը պահէ, որպէսզի դարձեալ Տիրոջ տայ:

Իսկ «շիրիմ» կը կոչուի, որ կը ստուգաբանուի, թէ այստեղէն «կը շարժիմ» ու «կը շինուիմ (կը ստեղծուիմ)»: Եւ յայտնի է, թէ յարութեան ատեն նոյն մարմինը կը շարժի ու կը շինուի (կազմուի):

Իսկ թէ փայտի մը գազաթին խաչ մը կը դնեն, կը նշանակէ խաչին գալուստը երկինքէն, իսկ ստեղները, որ կը վառին, խաչին ճառագայթը կը խորհրդանշեն, իսկ ժամահարը Գաբրիէլին փողը կը խորհրդանշէ: Իսկ որ առջեւէն կ'երթայ, ասիկա կը նշանակէ՝ փողը հնչելուն բոլորին անոր ետեւէն ընթանալը:

Իսկ ինչո՞ւ բոլորը՝ այրեր ու կիներ, գերեզման կու գան. ասիկա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ քանի որ, ըստ առաքեալի կանոններուն, վայել է լալ լացողներուն հետ ու խնդալ խնդացողներուն հետ⁴⁴:

Երկրորդ՝ կու գանք ու կ'ափսոսանք, որովհետեւ բոլորս ալ այսպէս բոլոր վայելչութիւնները պիտի ձգենք ու ասոր նման գերեզման պիտի երթանք:

Երրորդ՝ որովհետեւ բոլորս, մեռելին հետ ընթանալով, որպէս թէ ցուցնելով, թէ ասոր երկար ճամբայ կը ղրկենք, այդ պատճառով ալ կը համբուրենք:

Չորրորդ՝ բոլորը՝ այրեր ու կիներ, կու գանք՝ զԱստուած աղաչելով, որ ասոր մեղքերը ներէ, որովհետեւ ո՛չ ոք է առանց մեղքերու, թէեւ կրնայ արդար ալ ըլլալ, այս կ'ընենք:

⁴⁴ Հմմտ. Հոռմ. ԺԲ. 15:

Հինգերորդ՝ քանի որ մեր ընկերն է եւ մեզի համար շատ աշխատած է (յոգնած է), արդ՝ այլեւս փոխարէնը հատուցելու ոչինչ ունինք, բացի այն, որ գերեզմանին մէջ կը դնենք, քիչ մը կ'աշխատինք (կը յոգնինք) ու կ'արտասուինք:

Վեցերորդ՝ մեռելին ետեւէն կու գանք, որպէսզի մենք նոյնպէս արժանի ըլլանք խաղաղ թաղումի, քահանայի ու խոստովանութեան, իսկ եթէ ծովութիւն ընենք, այդ բոլորը մեզի չեն պատահիր:

Եօթներորդ՝ կու գանք, որպէսզի անոր մնացորդները (հարազատները) մխիթարենք՝ յուսադրելով ու օգնական ըլլալով:

Ութերորդ՝ բոլորս կու գանք, որպէսզի եթէ ոեւէ մէկուն վնաս պատճառած է այս մեռելը, վնասապարտը տեսնէ զինք ու միտքով թողութիւն շնորհէ անոր, որպէսզի իրենց եւս թողութիւն շնորհուի:

Իններորդ՝ որպէսզի իւրաքանչիւր ոք, այս օրը իր միտքը բերելով, չկարենայ չարութիւն գործել:

Տասներորդ՝ կու գանք, որպէսզի Տիրոջ հրամանին կատարումը տեսնենք, որ բնութեան պատիժ դրած էր՝ հողը հողին տալով: Ու ասով կը ճանչնանք, թէ ասիկա աս է, որ Ազամը հողացուց ու ասոր ալ Ազամին հետ պիտի յարուցէ:

Եւ մարդասէր Քրիստոսին փառք յաւիտեանս: Ամէն:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

